



## ԹԵՄԱ

**Կարագի գևի  
բարձրացման  
պատճառները:  
Մենաշնորհների դեմ  
պայքարի մեխանիզմները:**

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական  
հետազոտությունների գրասենյակ



research@arf.am



010 52 18 90



ք.Երևան, 0010  
Մ. Մկրտչյան 12/1

Վերլուծությունը կատարված է

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի կողմից.

Հրայր Մարուխեան Հիմնադրամը աջակցում է վերլուծության տարածմանը

# ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## «Կարագի գնի բարձրացման պատճառները: Մենաշնորհների դեմ պայքարի մեխանիզմները» թեմայով

Յուրաքանչյուր տարի մեր հանրության մոտ արդարացի դժգոհություն է ձևավորվում մի շարք սոցիալական նշանակության ապրանքների թանկացման ժամանակ, մասնավորապես՝ կարագի, մսի, շաքարավազի, ձվի և այլն: Չնայած այն հանգամանքին, որ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2017 թվականի 9 ամիսների ընթացքում միջին գնաճային ճնշումը կազմել է 1 տոկոս, այնուամենայնիվ, մեր հասարակությունը չափազանց զգայուն է ցանկացած պարենային ապրանքի թանկացման հարցում, քանի որ տեղական և միջազգային հաշվարկները ցույց են տալիս, որ ազգաբնակչության սպառողական ծախսերի մոտ 41.4 տոկոսը բաժին է ընկնում հենց պարենային ապրանքների ձեռքբերմանը:


ՀՀ քաղաքացիները տարեկան սպառում են մոտ 1.5 կգ կարագ, ինչը մի քանի անգամ քիչ է ՌԴ-ից և ԵՄ երկրներից: Վերջին ամիսների ընթացքում կարագի գնի աստիճանաբար բարձրացումը իր հետ բերեց մեր հասարակության հերթական բողոքը՝ դժգոհությունը: Սյժմ 1 կգ տեղական 72 տոկոսանոց կարագի մեծածախ գինը կազմում է 3700 ՀՀ դրամ, իսկ 82 տոկոսանոց նորզելանդականինը՝ 4000 ՀՀ դրամ:

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի ուսումնասիրությունների համաձայն՝ կարագի գնի բարձրացման վրա ազդել են մի շարք արտաքին և ներքին գործոններ, որոնք բացատրվում են միզազգային միտումներով և մեր տնտեսության նրցակցային իրավիճակի առանձնահատկություններով:

Եվ այսպես, վերջին մեկ տարվա ընթացքում, կարագի գինը միջազգային շուկայում աճել է մոտ 60 տոկոսով, ինչը պայմանավորված է 2016 թվականին ԵՄ-ում և Սվստրալիայում կարագի արտադրության ծավալների կրճատմանը, համապատասխանաբար՝ 5.5 տոկոս և 18 տոկոս: Սվստրալիայում կարագի արտադրության ծավալները կրճատվել են 2016 թվականի երաշտի պատճառ-

ռով, ինչի արդյունքում՝ կտրուկ նվազել է անասնազվաքանակը և կաթի մեջ յուղայնության աստիճանը, ինչպես նաև այս ժամանակահատվածում ԱՄՆ-ում և Ասիայում շեշտակի ավելացել է պանրի և սերուցքի պահանջարկը և մթերված կաթի մեծ մասը ուղղվել է հենց այս ապրանքների արտադրությանը: 2016 թվականի ընթացքում Ավստրալիան արտահանել է շուրջ 40 հազար տոննա կարագ: 2016 թվականի ընթացքում կարագի արտահանման ծավալները 3 տոկոսով նվազեցրել է նաև այս ոլորտում առաջատար երկրներից՝ Նոր Զելանդիան: ԵՄ-ում կարագի արտադրության ծավալների անկմանը նպաստել է ԵՄ-ի կարագի շուկայի ազատականացումը և կաթ արտադրող տնտեսվարողների սուբսիդավորման և այլ արտոնությունների կրճատումը: Արևմտյան Եվրոպայի երկրներում մեծածախ նորզելանդական կարագի 1 կգ-ի գինն առավելագույնին է հասել 2017 թվականի սեպտեմբերին՝ 8.075 ԱՄՆ դոլար, հոկտեմբերին՝ 7.05 ԱՄՆ դոլար, նոյեմբերին՝ 5.969 ԱՄՆ դոլար, դեկտեմբերին՝ 5,263 ԱՄՆ դոլար (**Գծապատկեր 1.**) նույն միտումն է գրանցվել նաև համաշխարհային շուկայում, այսինքն՝ վերջին ամիսների ընթացքում արձանագրվել է կտրուկ գնանկում, ինչը, ցավոք, տեղի չի ունենում Հայաստանում: 2017 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում Հայաստան է ներկրվել շուրջ 424 տոննա կարագ, այսինքն՝ ավելի էժան կարագի ներկրում ենք ունեցել:

**Գծապատկեր 1.** Արևմտյան Եվրոպայում կարագի (82% յուղայնությամբ) մեկ տոննայի միջին մեծածախ գինը (ԱՄՆ դոլարով)



Աղբյուրը՝ [www.clal.it/en/?section=burro\\_west\\_east](http://www.clal.it/en/?section=burro_west_east)

**Աղյուսակ 1.** 2016-2017թթ 11 ամիսների ընթացքում կարագի և այլ կաթնային յուղերի արտաքին առևտրաշրջանառությունը

US\$	Տարի	Արտահանում		Ներկրում	
		տոննա	1000\$	տոննա	1000\$
405	2017	7.1	32.4	3902.1	18302.2
405	2016	0.4	1.7	3984.5	14065.7
405	Դինամիկան (%)	1675.0	1805.9	-2.1	30.1

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ

2017 թվականի 11 ամիսներին նախորդ տարվա նկատմամբ արձանագրվել է կարագի և այլ կաթնային յուղերի արտահանման շուրջ 17 անգամ աճ և ներկրման 2.1 տոկոսի նվազում, ծավալային արտահայտությամբ, իսկ արժեքային արտահայտությամբ՝ համապատասխանաբար՝ արտահանման 17 անգամ աճ և ներկրման 30.1 տոկոս աճ:

2017 թվականի վերջին կիսամյակի և 2018 թվականի տնտեսական կանխատեսումների համաձայն՝ ԵՄ-ի և Ավստրալիայի կաթի և կարագի արտադրության ծավալները աստիճանաբար աճում են, ինչը նպաստում է կարագի գնի իջեցմանը: Հայաստանի փոքր շուկայի և համակենտրոնացման բարձր մակարդակի պայմաններում գների իջեցումը տեղի կունենա ավելի ուշ՝ 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

Հայաստանի կարագի շուկայում գործում են մեծ թվով ներմուծողներ և արտադրողներ, սակայն գերիշխող դիրք ունի Ալեքս Գրիգ ընկերությունը, որը իրականացնում է միաժամանակ ներմուծում և մանրածախ վաճառք: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից Ալեքս Գրիգի գործունեությունը պետք է ուսումնասիրվի ներմուծման մանրածախ շղթայի համատեքստում, և ոչ անջատ: Հակառակ դեպքում կունենանք այն, ինչ ունենք՝ մանրածախ վաճառքում գների սրընթաց բարձրացում և գների իջեցմանը արգելակող էֆեկտ: Հանձնաժողովն իր ուսումնասիրությունները կատարելիս պետք է հաշվի առնի (ճշգրտի) նաև այդ շուկայում

հնարավոր ստվերի մակարդակը, հակառակ դեպքում կստացվի՝ գրանցված օրինական հասույթին բաժին կընկնեն ավելի մեծ ծախսեր:

Սովորաբար, տեղական կարագ արտադրողները իրենց կարագի պաշարները կուտակում են ամռան ամիսներին, երբ կաթի գինը ցածր է, կաթի ծավալները՝ մեծ: Ներմուծվող կարագի գնի աստիճանաբար ավելացումը նպաստեց, որ տեղական կարագ արտադրողները իրենք ևս բարձրացնեն գները, քանի որ անփոփոխ գների պայմաններում շատ կարճ ժամանակահատվածում կիրացնեին իրենց կուտակած կարագի ամբողջ պաշարը, ինչի արդյունքում հետագայում մի քանի ամիս, կկորցնեին իրենց իրացման շուկան, չէին կարողանա սատակարարումներ իրականացնել հաջորդ նախատոնական ամիսներին: Բացի այդ, բարձր գների պայմաններում նրանք հնարավորություն ունեին քիչ ծավալ արտադրանք վաճառելով ստանալ ավելի բարձր հասույթ: Այն դեպքում, երբ կարագ արտադրելու համար անհրաժեշտ է իրականացնել կաթի մթերում, եթե ամռանը 1 լիտր կաթը արժեք 130 ՀՀ դրամ, ապա ներկայումս՝ 210–230 ՀՀ դրամ, ինչը կարագ արտադրող տնտեսավարողների համար բարձր գին է, իսկ կարճ ժամանակահատվածում կաթի փոշու ներմուծումը՝ չափազանց դժվար, դրանից արտադրված կարագը՝ ցածրորակ: Այս տարի Հայաստանում ևս երաշտային տարի էր, որի հետևանքով անասնապահները չկարողացան բավարար քանակությամբ խոտ ամբարել և ստիպված են խոտ ձեռք բերել բարձր գնով կամ կրճատել խոշոր եղջերավոր անասունների խմբաքանակը: Անասունների խմբաքանակի կրճատման վրա որոշակի ազդեցություն ունեցավ նաև աննախադեպ արտահանման ծավալների աճը՝ շուրջ 5 անգամ: Մաքսային ծառայության տվյալների համաձայն՝ եթե 2016թ հունվար-հունիս ամիսներին արտահանվել են 1400 գլուխ անասուն՝ 550 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 2 մլն 735 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ 6900 գլուխ խոշոր եղջերավոր:

Ներքին շուկայում կարագի գնի բարձրացման վրա ազդում է նաև այն, որ այս ապրանքային շուկայում առկա է հակամրցակցային համաձայնություններ, ինչը արտահայտվում է համատեղ գների սահմանմամբ և շուկան իրար մեջ բաժանմամբ: Դրա մասին փաստում է այն, որ չնայած միջազգային շուկայում կարագի գների իջեցման մեր ներկրողներից ոչ մեկը չի վերանայում

իր գնային քաղաքականությունը: Ստացվում է, որ բոլորը իրենց ներկրումները իրականացրել են թանկ գներով 2017 թվականի սեպտեմբերի ամսին և հետագա ամիսների համար պարտադրված են վաճառել իրենց ապրանքը բարձր գներով:

Բացի այդ, նոր տնտեսավարող սուբյեկտների շուկա մուտք գործելու համար անհրաժեշտ է մեծածավալ սարքեռինգային և իրացման ծախսեր, ինչպես նաև խոշոր սուպերմարկետների ցանցերի կողմից տնօրինվում է մանրածախ առևտրի 50 տոկոսը և ավելին, ինչը թույլ է տալիս խտրական քաղաքականություն իրականացնել «նորերի» նկատմամբ:

Համեմատության համար պետք է նշել, որ նույն ժամանակահատվածում սպրեդի և մարգարանի գները չեն աճել: Չնայած, որ դրանք համարվում է կարագի հետ որոշակի աստիճանի փոխադարձ փոխարինելի ապրանքներ: Սյս երևույթը բացատրվում է այս ապրանքային շուկայում համեմատաբար բարձր սրցակցային աստիճանով, քանի որ չեն գործում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտներ:

Տնտեսագիտական տեսանկյունից մենաշնորհի շուկա է այն ապրանքային շուկան, որտեղ գործում է մեկ տնտեսավարող սուբյեկտ, իսկ հանրային ընկալման մեջ մենաշնորհային է դիտվում այն սոցիալական նշանակության ապրանքային շուկաները, որտեղ մեկ կամ մի քան տնտեսավարողներ իրականացնում են միասնական կամ համաձայնեցված գնային քաղաքականություն և շուկան բաժանված է մի քանիսի միջև:

**ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԵԼ ՄԵՆԱՇՆՈՐՇՆԵՐԻ ԴԵՍ.**

**1.** 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սրբակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Սյսինքն՝ մենաշնորհների գոյությունը մեր տնտեսության մեջ կարող է բացատրվել, թույլատրվել հանրային շահից ելնելով: Ցավոք, այս սահմանադրական դրույթը «միս ու արյուն» չստացավ օրենսդրության մշակման աշխատանքներում և իրավակիրառ պրակտիկայում:

**2.** 2015 թվականի դեկտեմբերի 6-ին ընդունված ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդվածի համաձայն՝ 2018 ապրիլի 9-ից ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի փոխարեն գործելու է ինքնավար մարմին, որի անդամները նշանակվելու են պատգամավորների ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ, ինչը, անշուշտ, կնպաստի տնտեսական մրցակցությունը պաշտպանող մարմնի գործունեության անկախությանը և այս ոլորտում խորհրդարանական վերահսկողության հաստատմանը: 2018 թվականի ընթացքում ինքնավար մարմնի անդամների ընտրությունը կարևոր նշանակություն կունենա Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի համար: Սյս համատեքստում կարևորում ենք նաև ինքնավար մարմնի լիազորությունների և պարտականությունների հստակ սահմանումը, ինչը կկանխի կանայական վարույթների նախաձեռնումը և ոչ բավարար հիմնավորված որոշումների ընդունումը:

**3.** Միջազգային փորձը փաստում է, որ երկրի տնտեսության համար ռազմավարական և սոցիալական նշանակություն ունեցող ապրանքների մեծածախ վաճառքը առավել արդյունավետ և վերահսկելի է, երբ այն իրականացվում է պետության կողմից կարգավորվող էլեկտրոնային հարթակների (բորսաների) միջոցով, ինչը նպաստում է շուկա մուտք գործող նոր տնտեսավարողների վերաբերյալ տեղեկատվության



հասանելիությանը, խտրական գների բացառմանը, մեծածախ շուկայում ստվերի կրճատմանը, առողջ մրցակցությանը և այլն:

**4.** Մեր օրենսդրությամբ ապրանքային շուկայում մենաշնորհ և գերիշխող դիրք ունենալը արգելված չէ, արգելված է այդ դիրքի չարաշահումը, մասնավորապես՝ գների չիմնավորված բարձրացումը, պահպանումը և (կամ) իջեցումը և այլն: Պետությունը հնարավոր բոլոր միջոցներով պետք է խրախուսի նոր տնտեսավարող սուբյեկտների ի հայտ գալուն՝ վերացնելով հարկային, մաքսային և այլ բնույթի խտրականությունը, սակայն ելնելով մեր շուկայի փոքրությունից չպետք է բացառել մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարողների գործունեությունը: Սյո ընկերությունները, դառնալով բաժնետիրական, բաժնետոմսերի որոշ մասը ազատ վաճառքի հանելով, կնպաստեն հանրային վերահսկողության և եկամուտների վերաբաշխման հաստատմանը:

**5.** Գործող օրենսդրության համաձայն՝ մենաշնորհ և գերիշխող դիրքը չարաշահող տնտեսավարողների նկատմամբ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը կարող է նշանակել տուգանք առավելագույնը՝ հասույթի 2 տոկոսի չափով, որը գանձվում է պետական բյուջե: Փաստացի ստացվում է, որ մենաշնորհ կամ գերիշխող դիրքը չարաշահող տնտեսավարողը տուգանվում է, սակայն որևէ կերպ չի փոխհատուցվում նրա գործունեության արդյունքում տուժած տնտեսավարողների վնասը: Հետևաբար, անհրաժեշտ է մշակել և ներդնել տնտեսական մրցակցության պաշտպանության և վնասների հատուցման առավել արդյունավետ կառուցակարգեր:

## ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ Է

- ❑ մենաշնորհների գործունեությունը «խոշորացույցի» տակ պահելը,
- ❑ նոր տնտեսավարող սուբյեկտներին պաշտպանելը և խրախուսելը,
- ❑ ժամանակակից հակամենաշնորհային քաղաքականության մշակումը և հասցեական կիրառումը,
- ❑ հանրային վստահության բարձրացումը,
- ❑ ազգային եկամտի արդարացի վերաբաշխելը:

Սյապիտով, ապրանքների գները կարող են օբյեկտիվորեն բարձրանալ, սակայն տնտեսական քաղաքականությունը պետք է նպաստնի գների բարձրացման կանխմանը և մեղմացմանը, իսկ սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղված լինի նվազագույն կենսաապահովման պայմանների պահպանմանը և բարելավմանը:





## ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հրայր Մարուխյան Հիմնադրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2009թ.-ին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայաստանի Գերագույն Սարմսի կողմից: Այն հանդիսանում է շահույթ չհետապնդող հիմնադրամ, որի նպատակն է հանրային, քաղաքական խնդիրների լուծման առաջխաղացումն ու զարգացումը, որոնք նպաստում են սոցիալական ժողովրդավարության հիմնական արժեքների տարածմանը՝ կրթական և ուսումնական ծրագրերի, ուսումնասիրությունների և տարածաշրջանային ու միջազգային համագործակցության միջոցով:

[www.maroukhianfoundation.org/am/](http://www.maroukhianfoundation.org/am/)  
[www.facebook.com/HrayrMaroukhianfoundation/](https://www.facebook.com/HrayrMaroukhianfoundation/)



## ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻ ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակը կազմավորվել է 2017 թվականի ամռան ընթացքում: Գրասենյակի գործունեության հիմնական նպատակն է Հայ Յեղափոխական Դաշնակցության քաղաքական և սոցիալ-տնտեսական ինքնուրույն մարտավարության մշակումը և իրագործման մշտադիտարկումը (մոնիտորինգը):